



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

19 մայիսի 2020 թվականի թիվ 34-Ա  
ք. Երևան

#### «ՄԵԴԻԱ ՔՈՆԹԵՆՏ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի, 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՄԵԴԻԱ ՔՈՆԹԵՆՏ» ՍՊ ընկերության ոչ սեփական հեռուստաձայնային վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2020 թվականի մայիսի 7-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *որոշեց*.

1. Բավարարել «ՄԵԴԻԱ ՔՈՆԹԵՆՏ» ՍՊ ընկերության դիմումը և տալ ոչ սեփական հեռուստաձայնային վերահեռարձակելու թույլտվություն՝ հեռուստաձայնային վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

Հեռուստադրագրի անվանումը	Թույլտվության ժամկետի ավարտը
«Բոկս ՏՎ» «Կուլինյա ՏՎ» «Զի ՏՎ» «ՏՆՏ Սյուզիթ»	30.06.2020թ.
«Պերվիյ կանալ: Վսեմիրնայա սետ» «Կարուսել Ինթերնեյշնլ»	30.06.2020թ.
«НТВ Мир» «Охотник и рыболов» «Шансон-ТВ» «Муз ТВ» «НСТВ» «Мульт»	31.12.2020թ.
«Մատչ! Պլանետա» «Կինոպրեմիերա» «Կինոխիտ»	30.06.2020թ.
«USU» «Ռեն ՏՎ» «USU Քիդս» «5 Կանալ» «Իզվեստիյա» «Պերեց» «Դոմաշնիյ» «ՌԲԿ» «Բրիջ ՏՎ» «Բրիջ ՏՎ Դանս» «Բրիջ ՏՎ Կլասսիկ» «Բրիջ ՏՎ Ռուսկիյ Խիտ»	31.12.2020թ.
«THT- Comedy» «THT4 International» «Friday International»	31.12.2020թ.
«Շանթ»	անժամկետ
«National Geographic» «Nat Geo Wild»	անժամկետ